

ՏԱՐԱԳՐՈՍ ԱՏԵՓԵՆԻ ՏԵՐ-ՎԱՐԳՆԵՑՆԵ

Սույն թվականի ապրիլի 1-ին սրտի պայթյունից հանկարծամահ եղավ հայկական մանրանկարչության և քանդակագործության ահանավոր վարպետ, հայագիտական լայն շրջանում սիրված և հարգված մասնագետ Տարագրուս Ատեփանի Տեր-Վարդանյանը:



պաշտոններով՝ էջմիածնի թանգարանի վարիչի տեղակալ, Պատմության և գրականության ինստիտուտի գիտական աշխատող, նկարչության և փորագրության դասատու մի քանի մասնագիտական տեխնիկումներում և այլն:

Տարագրուսը տարիներ շարունակ ուսումնասիրելով Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի մանրանկարչություն պարունակող հազարավոր հայկական ձեռագրերը, կարողանում է թափանցել հայկական մանրանկարչության բնորոշ առանձնահատկությունների մեջ

Տարագրուսը ծնվել է 1878 թվականի փետրվարի 28-ին Երևանում, արհեստավորի ընտանիքում: Փոքր հասակում կորցնելով հորը, նյութական մեծ զրկանքների գնով հաջողվում է նրան սովորել Երևանի թեմական դպրոցում և այն ավարտել: Այնուհետև,

բարերարների օգնությամբ, նա գնում է Մոսկվա և Լենինգրադ և մասնագիտական կրթություն ստանում Գեղարվեստի և Հնագիտական ինստիտուտներում և Լազարյան ձեմարանում:

Մասնագիտական կրթությունը ավարտելուց հետո, 1907 թվականից, Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերության կողմից նա աշխատանքի է հրավիրվում իբրև Հայաստանի և Վրաստանի հնագիտական հուշարձանները չափագրող-գծագրող ճարտարապետ և աշխատում մինչև Համաշխարհային առաջին պատերազմը: Այդ տարիներին նա մասնակցում է նաև Անիում կատարվող պեղումներին:

Տարագրուսի տեղիագործական աշխատանքը լայն թափ և ծավալ է ստանում Սովետական իշխանության տարիներին: 1921 թվականին նա Յավթայից հրավիրվում է Սովետական Հայաստան և աշխատում մի շարք

և մեծ հաջողությամբ նրանք օգտագործում իր ձևավորած գրքերում և ալբոմներում, որոնց թիվը հարյուրի է հասնում: Բավական է թեկուզ թերթել հայ ժողովրդական հերոսական էպոս «Մասունցի Դավթի» նրա ձևավորած գունատիպ ժողովածուները, տեսնելու՝ թե որքան խորն է նա ըմբռնել հայ մանրանկարչական արվեստը և որքան հարազատությամբ ու ինքնատիպությամբ վերարտադրել այն:

Մեծ է Տարագրուսի թողած վաստակը փորագրության ասպարեզում: Նա է զարդարանդակել Նրեանում Հայկական ՍՍՌ Կուսակառական տոմբը, Փոստը, Գյուղատնտեսական բանկը, Ալնարուժարանը և տասնյակ այլ շենքեր: Նրա հեղինակությանն են պատկանում կարծր քարից պատրաստած մի շարք սկահակներ (վազաներ), որոնք բարձր գնահատանքի են արժանացել մեր ռեսպուբլիկա-

յի և Մոսկվայի գեղարվեստասեր հասարակայնության կողմից:

Տարագրուը մեծ գործ է կատարել նաև ևրիտասարդ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ, որոնց մեջ քիչ չեն Սովետական Հայաստանում ներկայումս ճանաչված և անոն ունեցող արվեստագետները:

Տարագրուան իր տարիների մեղվաջան պրպտումների արդյունքն ամփոփել է մի քանի արժեքավոր ուսումնասիրությունների՝ «Հայկական արվեստի տեխնոլոգիան հնագույն շրջանից մինչև մեր օրերը», «Հայկական կիրառական արվեստը», «Փոքագուրջունը Հայաստանում հնագույն շրջանից մինչև XVII դար» և այլ աշխատությունների մեջ:

Իր արվեստը, որը նա սիրում էր իր հոգու ողջ էությունը, իր ստեղծած արժեքները,

որոնք նա մեծ բավականություն էր կատարում հանուն Հայրենիքի արվեստի զարգացման, բացառիկ խանդավառությամբ էին համակել նրան: Ամենուր՝ քաղաքում, թե հեռավոր գիտական արշավի ժամանակ, արհեստանոցում, թե շենքերի շորրորդ հարկի ճակատը զարդաքանդակելիս, Տարագրուին միշտ կարելի էր հանդիպել խանդավառ՝ իր աշխատանքով, միշտ դիտաբաց, միշտ կենսուրախ և զվարճախոս:

Զրուցի ժամանակ նա չէր սիրում մահվան մասին խոսել և կատակերով միշտ կրկնում էր սիրած գրաքար դարձվածքը. «Վաստակեա՛յալիտեան և կեցցես մինչև ի սպառ»:

Իր թողած վաստակով, իր ստեղծագործություններով, իրոք տր Տարագրուը անմահ է և գալիք սերունդները օրհնությամբ պիտի հիշեն նրա անմոռաց հիշատակը:

